

## 1.9. Մնացորդի որոշումը (մի քանի քայլով)

### Երեխայի հետ զբաղվողին

- Պարտեզում 15 վարդ էր բացվել: Առաջին օրը 4 վարդ քաղեցին, իսկ երկրորդ օրը՝ 5 վարդ: Պարտեզում քանի՞ վարդ մնաց:

Ընդամենը 15 վարդ կար: Նախ 4 վարդ քաղեցին: Վարդերը 4-ով պակասեցին: Թփի վրա  $15 - 4 = 11$  վարդ մնաց: Հետո էլի 5 վարդ քաղեցին, այսինքն հիմա էլ մնացած 11-ից 5-ով պակասեց, դարձավ 6 վարդ ( $11 - 5 = 6$ ): Վարդերը նախ 4-ով պակասեցին, հետո՝ 5-ով ու դարձան 6:



### Հուշում

Ինչդրի լուծումն ըստ ամենայնի ամբողջականացնելու համար լավ կլինի երեխայի (երեխաների) ուշադրությունը հետևյալի վրա հրավիրել՝  
 ա) հազորդաբար 4 և 5 հանելը նույնն է, թե 9 ( $4 + 5$ ) հանես,  
 բ) եթե նախ 5 վարդ փաղեին, ապա՝ 4, այսինքն՝ գործողությունները հակառակ հերթականությամբ կարարեին, թփին նույնքան վարդ կմնար  
 ( $11 - 5 - 4 = 11 - 4 - 5 = 6$ ):

- Առավոտյան հողամասի մարգերը 18 մարդ էին ջրում, կեսօրին նրանց ևս 7 մարդ միացավ: 14 մարդու հեռանալուց հետո դաշտում քանի՞ մարդ մնաց :

Պատկերացրու՝ 18 մարդ աշխատում էր, երբ նրանց 7 մարդ ավելացավ: Մարդիկ դարձան  $18 + 7 = 25$ : Հետո այդ 25 մարդկանցից 14-ն ավարտեցին իրենց գործն ու հեռացան. 25 մարդկանցից 14-ը պակասեցին, դարձան 11 ( $25 - 14 = 11$ ): Այսինքն՝ դաշտում 11 մարդ մնաց:



## Արի խնդիր լուծենք

1.



Նկարներին նայելով հաշվիր՝ տուփի մեջ քանի՞ մատիտ մնաց:

Կտանալուից, 2 դուռնիմ:

2.



Նկարին նայելով հաշվիր՝ կանգառում քանի՞ մեքենա մնաց:

Կտանալուից, 9 դռնբլուր:



3. Միջանցքում 14 լամպ էր վառվում, իսկ սենյակում՝ 12: 8 լամպը փչացան: Քանի՞ լամպ վառված մնաց:



### Հուշում

*Թղթի վրա լամպերը կարող ես կերտերով պարկերել, հասկանալ, հաշվել:*

Մտնառախուղ, 18 Խուլով:

## Ազատ Նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստատ կլուծես:)

1. Անիի համար 7 մ կապույտ և 6 մ կարմիր ժապավեն գնեցին, որից 5 մետրն զգեստի համար օգտագործեցին: Քանի՞ մետր մնաց:
2. Այգում 8 տանձենի և 9 խնձորենի կար: 3 ծառ չորացավ: Այգում քանի՞ ծառ մնաց:
3. Համակարգչային սենյակում 18 տղա և 7 աղջիկ էին աշխատում: Մի ժամ հետո 6-ը դասի գնացին: Համակարգչային սենյակում քանի՞ մարդ մնաց:
4. 28 մարդ Բանջարանցում աշխատում էր: 5 մարդ ջրի գնաց, իսկ 3-ը՝ սերմեր բերելու: Բանջարանցում քանի՞ մարդ մնաց:
5. Մի ափսեի մեջ 12 սալոր կար, մյուսում՝ 18 սալոր: 15 սալորն ուտելուց հետո քանի՞ սալոր մնաց:



6. Հանրօգուտ աշխատանքի ժամին մեր դասարանը 8 նստարան ներկեց, իսկ ընկերոջս դասարանը՝ 3-ով ավելի: Դրանցից 4-ն անձրևի տակ փչացան: Քանի՞ նստարանի ներկն էր պահպանվել:
7. Մի խնձորենու վրա 14 խնձոր կա, մյուսի վրա՝ 23 խնձոր: 12 խնձորն ընկնելուց հետո ծառերին քանի՞ խնձոր մնաց:
8. Երեխաները 60 ծառ տնկեցին: Առաջին խումբը 10 ծառ տնկեց, երկրորդ խումբը՝ 20 ծառ: Մյուսները քանի՞ ծառ տնկեցին:
9. Գնացքներից մեկը 25 բեռնված վագոն ուներ, իսկ մյուսը՝ 30 վագոն: Բանվորները 40 վագոն բեռնաթափեցին: Քանի՞ վագոն մնաց բեռնաթափելու:
10. Դպրոցի բուֆետը 50 լ կաթ ստացավ: Առավոտյան 20լ օգտագործեցին, իսկ կեսօրին՝ 10լ: Մնացած կաթից մածուն մերեցին: Քանի՞ լիտր կաթից մածուն մերեցին:
11. Դաշտում առավոտյան 45 հնձվոր էր աշխատում: Կեսօրին նրանց միացավ ևս 12 հնձվոր: 18 հնձվոր հանգստանալու գնաց: Դաշտում քանի՞ հնձվոր մնաց:
12. Մի դարակին 29 գիրք կա, մյուսին՝ 3-ով պակաս: Այդ դարակներից 5 գիրք վերցնելուց հետո ընդամենը քանի՞ գիրք կմնա:
13. Եղբայրս, քույրս և ես միասին 67 հատ kinder-խաղալիք ունենք: Դրանցից 28-ն իմն են, 29-ը՝ եղբորս: Քույրս քանի՞ kinder-խաղալիք ունի:
14. Մեր շենքում 90 բնակիչ կա, իսկ հարևան շենքում՝ 20-ով պակաս: 12 մարդ ուրիշ երկիր մեկնելուց հետո երկու շենքերում միասին քանի՞ բնակիչ կմնան:



## 1.10. Գումարելիի և հանելիի որոշումը (մի քանի քայլով)

### Երեխայի հենք գրադժողին

1. Փողոցի մի կողմում 25 տուն կար, մյուս կողմում՝ 24 տուն: Մի քանի տուն էլ կառուցեցին, փողոցի վրա 63 տուն դարձավ: Քանի՞ տուն կառուցեցին:

Սկզբում փողոցի վրա 25 ու էլի 24 տուն կար, այսինքն՝  $25 + 24$ , որը = 49: Որովհետև 25-ի ու 24-ի մեջ մեկական 20 կա, այսինքն 2 հատ 20՝ 40, իսկ 5-ի և 4-ի գումարն էլ 9 է: 40 և 9, այսինքն՝ 49: (Կամ՝ փողոցի մի կողմի 25 տանն ավելացնենք մյուս կողմի 20 տունը, կլինի 45, հետո մնացած 4 տունը կավելացնենք, ու կստացվի 49): Ուրեմն սկզբում փողոցի վրա 49 տուն կար, մի քանի հատ (չգիտեմ ինչքան) էլ կառուցեցին, ստացվեց 63 տուն: 49-ին ի՞նչ ավելացավ, որ 63 ստացվեց ( $49 + ? = 63$ ): 63 տնից հանենք սկզբում եղած 49-ը, կստանանք ավելացած տները: Այսինքն՝  $63 - 49 = 14$ : **14 ստացվեց**. 63-ից 49 հանելու համար կարող ենք նախ 40-ը հանել, հետո՝ մնացած 9-ը:  $63 - 40 = 23$ , իսկ  $23 - 9 = 14$ :

2. 40 կարմիր և 24 կապույտ կոճակներից մի քանիսը զգեստներին կարեցին, որից հետո 58 կոճակ մնաց: Քանի՞ կոճակ օգտագործեցին:

Ունեինք 40 ու էլի 24 կոճակ, այսինքն՝  $40 + 24$ , որը = 64 կոճակ: Որովհետև 40-ի մեջ 4 հատ 10 կա, իսկ 24-ի մեջ՝ 2 հատ, միասին կլինի 6 հատ 10, այսինքն՝ 60: 24-ից մնացած 4-ն էլ ավելացնենք, կստացվի 64: Այդ 64 կոճակից մի քանի հատ օգտագործել ենք ու 58 կոճակ է մնացել: 64 կոճակից մի քանի հատ պակասել է, 58-ն են մնացել: Նույնն է թե՛  $64 - ? = 58$ : Պատկերացնենք օգտագործած կոճակների տեղ ուրիշներ ենք դնում: 58-ի վրա քանի՞սը դնենք, որ 64 ստացվի: 2-ը ավելացնենք, 60 կդառնա, էլի 4-ն ավելացնելիս՝ 60 ու 4, այսինքն՝ 64: Ուրեմն **6 կոճակ** ավելացրինք ( $64 - 58 = 6$ ):



### Հուշում

1) Որպեսզի երեխան հար-հար հաշվելուց կամայ-կամայ գործողությունն անմիջապես կարարելուն անցնի, ինդիքը լուծելուց հետո, վերջում միշտ նշե՛ք արված գործողությունը: Օրինակ՝ արվյալ դեպքում՝  $64 - 6 = 58$ :

2) Եթե երեխան այսպիսի բացատրությունը չհասկանա, կարող ե՛ք կոճակներով կամ ուրիշ մանր առարկաներով ինդիքը մոդելավորել:



# Արի խնդիր լուծենք


1.



Նկարին նա-  
յելով հաշվիր՝  
քանի՞ դարակ  
կա, եթե 15 իր՝  
սեղան, աթոռ և  
դարակ կա:

Վարձատրվում է մտառով:

2.



Նկարներին նայելով հաշվիր՝ քանի՞ թռչուն են թռել հեռացել:



- 3.** Միքայելը 23 տիպ ուներ, մայրիկը նրան էլի 8 տիպ նվիրեց, մի քանի հատ էլ՝ հայրիկը: Միքայելը 34 տիպ ունեցավ: Հայրիկը քանի՞ տիպ նվիրեց:



### Հուշում

*Եթե չարաչվի, կոճակներով կամ ուրիշ մանր առարկաներով օգնիր փեշ հաշվել:*

Կատարելու է 3 մեթոդ:

## Ազատ նախարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստատ կլուծես:)

1. Ակվարիումում մի քանի ձուկ ունեինք: Ես 8 ձուկ առա բերեցի, հետո 7 ձուկ եղբայրս բերեց: Ակվարիումում 20 ձուկ եղավ: Սկզբում քանի՞ ձուկ կար:
2. Հայրս, եղբայրս և ես մարմնամարզիկ ենք: Երբ իմ բոլոր մրցանակները միացրեցի եղբորս 3 և հորս 11 մրցանակներին, 19 մրցանակ եղավ: Ես քանի՞ մրցանակ ունեմ:
3. Տոնածառի վրա 20 խաղալիք կա՝ 3 սկյուռիկ, 6 կոն, մնացածը՝ աստղիկներ: Տոնածառի վրա քանի՞ աստղիկ կա:
4. Ամանորյա տոներից առաջ հայրիկս, մայրիկս ու ես 22 նվեր պատրաստեցինք: Քանի՞ նվերը հայրիկս պատրաստեց, եթե մայրիկս 10-ն էր պատրաստել, իսկ ես՝ 6-ը:
5. Ծաղկեփնջում 21 սպիտակ և կարմիր մեխակ կար: Մի քանի մեխակ թոռոնելուց հետո 7 սպիտակ և 5 կարմիր մեխակ մնաց: Քանի՞ մեխակ թոռոնեց:



- 6.** Սկուտեղի մեջ 36 կտոր հաց կար: Ճաշին 14 կտորը կերան: Ընթրիքին քանի՞ կտոր հաց կերան, եթե ավստում 3 կտոր հաց մնաց:
- 7.** Տատը 30 կարտոֆիլով կարկանդակ թխեց և 24՝ մսով: Նախաճաշից հետո 42 կարկանդակ մնաց: Նախաճաշին քանի՞ կարկանդակ կերան:
- 8.** Սահադաշտում 38 երեխա կար: Մի քանի տղա և 11 աղջիկ տուն գնացին: Սահադաշտում 20 երեխա մնաց: Քանի՞ տղա տուն գնաց:
- 9.** Երեք ավրոնը 64 թերթ ունի: Առաջինում 14 թերթ է, երկրորդում՝ 6 թերթով ավելի: Երրորդ ավրոնը քանի՞ թերթ ունի:
- 10.** Մի դարակում 37 գիրք կար, մյուսում՝ 25 գիրք: Երբ մի քանի գիրք էլ ավելացրեցին, 70 գիրք եղավ: Քանի՞ գիրք ավելացրեցին:
- 11.** Խանութում 96 արկղ միրգ կար: Մինչև կեսօր 49 արկղ վաճառեցին, մի քանիսն էլ կեսօրից հետո վաճառեցին: Կեսօրից հետո քանի՞ արկղ միրգ վաճառեցին, եթե 6 արկղ միրգ մնաց:
- 12.** Այգում 96 ծառ կար: Դրանցից 37-ը թխկի էր, 33-ը՝ բարդի, մնացածը՝ ընկուզենի: Այգում քանի՞ ընկուզենի կար:
- 13.** Երեք դասարանում 77 աշակերտ կա: Առաջինում 28 աշակերտ, իսկ երկրորդում՝ 25: Երրորդ դասարանում քանի՞ աշակերտ կա:
- 14.** Մանկապարտեզի 65 փափուկ խաղալիքներից 15-ը շնիկ էին, 22-ը՝ արջուկ, մնացածը՝ փիսիկ: Քանի՞ խաղալիք փիսիկ կար:
- 15.** Առաջին օրը մեր հողամասից 70 կգ կարտոֆիլ հավաքեցինք, իսկ երկրորդ օրը՝ 150 կգ: Մի մասը տատիկենց տվեցինք և 50 կգ կարտոֆիլ մնաց մեզ: Տատիկենց քանի՞ կիլոգրամ տվեցինք:

